

Գ. Բ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2003, 166 էջ:

Մեծանուն լեզվաբանի այս նոր գիրքը թերևս դասվում է նրա այն աշխատությունների թվին<sup>1</sup>, որոնք իր կողմից մշակված և արդեն իսկ ամբողջական տեսքով համաշխարհային գիտական հանրությանը ներկայացված համընդհանուր լեզվաբանական տեսության յուրատեսակ «փորձարկումներ» են հայերենի լեզվական նյութի վրա: Եթե, ասենք, «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» (Ե., 1989) գիրքը ՀԼՏ-ի (համընդհանուր լեզվաբանական տեսություն) կիրառմամբ հայերենի բառապաշարի ձևությամբ կազմի բոլոր հնարավոր համակցություններով ստացվող կաղապարների ամբողջական քննությանն է նվիրված, ապա այս աշխատությունը նույնպես ըստ հնարավորին ամբողջական ընդգրկումով և միևնույն սկզբունքների գործադրմամբ ներկայացնում է հայերենի շարահյուսական կաղապարների ընդհանուր բանաձևերը և դրանց մասնակի կաղապարներ:

ըր: «Շարահյուսական ուսումնասիրություններ» գիրքն, իրոք, համարգումարային արժեք է ստանում ակադեմիկոսի նախորդ աշխատությունների (հատկապես «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները») շարահյուսագիտական նյութն ի մի բերելու և այն իբրև համընդհանուր լեզվաբանական տեսության մի ավարտուն ենթահամակարգ ներկայացնելու առումով:

Ավելորդ չէ ասել, որ հեղինակի շարահյուսագիտական ըմբռումները դիտարկելի են համընդհանուր լեզվաբանական տեսության տերմինաբանության շրջանակներում և բնականաբար չեն համընկնում շարահյուսական ավանդական պատկերացումներին, շատ դեպքերում էլ պարունակում են վերջիններիս մեջ առկա հակասությունների յուրատեսակ հանգուցալուծումները: Մասնավորապես շարահյուսության առարկայի և միավորների<sup>2</sup> Գ. Ջահուկյանի մեկնաբանությունը նոր լույս է սփռում բառ-բառակապակցություն-նախադասություն միավորների և դրանց փոխհարաբերության գնահատման հարցերի վրա:

Որո՞նք են ՀԼՏ-ի այն տեսական հիմնադրույթները, որոնց վրա

<sup>1</sup> Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989 և այլն:

խարսխվում են Գ. Ջահուկյանի շարահյուսագիտական ուսմունքը և իայերենի շարահյուսական միավորների՝ այս գրքում կատարված կոնկրետ վերլուծությունը:

ՀԼՏ-ի վերջնական խմբագրության մեջ լեզվական մակարդակների, մակարդակային միավորների և դրանք ուսումնասիրող բաժինների բաշխման մեջ<sup>2</sup> լեզվի շարահյուսական կառուցվածքը բաժանվում է երեք մակարդակների՝ շարային, նախադասական, հենքային (տեքստային)՝ իրենց համապատասխան ենթամակարդակներով ու առանձնացվող միավորներով: Առաջին մակարդակի միավորներն են դասույթը և շարույթը, երկրորդին՝ ասույթը (պարզ նախադասություն) և լրասույթը, երրորդին՝ հինույթը (պարբերություն) և լիահինույթը: Կարևոր է նկատի առնել, որ այս միավորները հատուկ ստորակարգություն են ներկայացնում. ստորին մակարդակի միավորը ներառվում է վերին մակարդակի միավորի մեջ և կարող է ներկայանալ միայնակ (միայն միջուկային բաղադրիչով). շարույթը՝ միայն մեկ բառով, նախադասությունը՝ միայն մեկ շարույթով, հենքը (տեքստը)՝ միայն մեկ նախադասությամբ (տես էջ 83): Ի

վերջո, ո՞րն է շարահյուսության եզրային միավորը՝ բա՞ռը, թե՞ բառակապակցությունը. ավանդաբար ոչ միանշանակ համարվող այս և այլ հարցադրումների պատասխանը տրվում է շարույթի (սինտագմա) գաղափարի ներմուծմամբ, որով միավորվում են նախադասության մեջ միևնույն գործառույթը կատարող բառը և բառակապակցությունը: «Եթե տվյալ գործառույթը կատարող բառակապակցության կենտրոնական անդամը մնում է միայնակ, ապա նախադասության անդամի գործառույթը կրողը դառնում է բառը» (էջ 5): Ըստ էության «նախադասությունը կարող է սահմանվել որպես ստորոգում ունեցող շարույթ կամ շարույթակապակցություն (գերշարույթ)» (էջ 85): Նախադասության եզրային միավորի դերում փաստորեն հանդես է գալիս դասույթը՝ որպես լիմաստ բառի ձև (համադրական կամ վերլուծական), որը ներառվում է շարույթի մեջ և կարող է միայնակ շարույթ կազմել: Նախադասության համար էական համարվող ստորոգման հատկանիշը շարույթի համար ոչ պարտադիր (ոչ ռեկանտ) է, այսպիսով շարույթը նախադասության և բառի միջև միջին դիրք զրավող միավոր է:

Այս աշխատության առաջին հատվածի հիմնական բովանդակությունն է կազմում արդի հայե-

<sup>2</sup> См Г. Б. Джаукян, Универсальная теория языка, М. 1999, էջ 85, Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, էջ 12.

րենի շարույթների, ապա և շարահյուսական ավելի բարձր միավորների՝ ասույթի (պարզ նախադասության), լրասույթի (բարդ նախադասության) և վերջապես հենքի (տեքստի) (պարբերության և լիահինույթի) կաղապարների ջննությունը: Սրանք մենալեզվական կաղապարներ են՝ կառուցված հեղինակի նախորդ աշխատանքներում հանգամանորեն ներկայացված ընդհանուր սկզբունքներով: Խստորեն պահպանվում է տեսության համար առանցքային՝ միասնության (մոնիզմի) սկզբունքը, ըստ որի՝ տարբեր մակարդակների միավորների (ասենք, ածանցավոր բառի և շարույթի) կաղապարների կառուցման սկզբունքների միջև առկա է լիակատար զուգահեռություն: Բոլոր դեպքերում կաղապարը ներկայացնում է տվյալ միավորի միջուկային և առմիջուկային բաղադրիչները՝ վերջիններիս ընդհանուր թվի, հաջորդման հնարավոր կարգի, պարտադրականության (ներքին կախումների) նշումներով: Շարահյուսական կառույցների նկարագրության մեջ կարևորվում է հատկապես համասեռ և տարասեռ կաղապարների հեղինակային տարբերակումը և դրանց առանձին ջննությունը: Համասեռ կաղապարների մեջ նրա յուրաքանչյուր բաղադրիչն իր «բնական» դիրքում է, կատարում է

իրեն հատուկ շարահյուսական գործառույթ. տարասեռ կաղապարներն ստացվում են փոխկաղապարման արդյունքում՝ ներկադապարային, համամակարդակային և տարամակարդակային զանազան կարգի փոխանցումներով: Բերենք շարույթի կաղապարի մեկ օրինակ. գոյականական համասեռ շարույթի միջուկային անդամը գոյական որոշյալն է (գ), առմիջուկային անդամները՝ ածականը (ա), թվականը (թ), դերանվանական ածականը (դա): Կաղապարի մեջ սրանք ունեն հետևյալ հաջորդականությունը՝ (դա) (թ) (ա) գ՝ (այս) (տասը) (գեղեցիկ) տները (էջ 15): Պետք է նկատի առնել, որ առմիջուկային (լրացական) անդամներն իրենց հերթին կարող են արտահայտվել համասեռ շարույթներով՝ իրենց համապատասխան կաղապարներով:

Նույն սկզբունքով է կառուցվում նաև ասույթի (պարզ նախադասության) կաղապարը. այստեղ որպես միջուկային անդամ հանդես է գալիս ստորոգյալը, որը «բուն ասույթի մեջ միշտ արտահայտված է» (էջ 27): «Ե՛վ ենթակայի, և՛ ստորոգյալի լեզվական արտահայտության տակ նկատի են առնվում ոչ թե միայնակ բառերը, ինչպես ընդունված է հայ ավանդական քերականության մեջ, այլ շարույթները» (էջ 27): Մեր քերականություն-

ներում սովորաբար ընդունվող նեղ ըմբռնումից տարբեր է մաև ստորոգման մեկնաբանությունը «Փողոց»։ Նախադասության մեջ ստորոգումը արտահայտվում է դադարով, որը կապում է փողոցի հոգեկան ընկալումը նրա լեզվական անվանման հետ։ Սրանով նախադասության՝ որպես ստորոգական շարույթի հասկացության մեջ ներառվում են միակազմ կոչվող նախադասությունները, որոնց առանձին կադապարները նույնպես հանգամանորեն ներկայացված են այս գրքի մեջ։

Լրասույթի (բարդ նախադասության) կադապարը ևս զուգահեռվում է շարույթի և ասույթի կադապարներին։ Այստեղ միջուկային բաղադրիչը գերադաս (զլխավոր) նախադասություն է, առմիջուկայինները՝ երկրորդական, ստորադաս։ Պետք է նշել, որ ինչպես պարզ նախադասության երկրորդական անդամների, այնպես էլ երկրորդական նախադասության գործառույթները բնութագրվում են համընդհանուր լեզվական կադապարի համար առանձնացված կարգային (կատեգորիական) իմաստների տեսանկյունից։ Նույն սկզբունքով պարբերության միջուկային անդամ է այն նախադասությունը, որը զուրկ է այլ պարբերությունների հետ տվյալ պարբերության կապն արտահայտող միջոց-

ներից, ինքնակա է, «ոչ նշակիր»՝ ի տարբերություն «նշակիր» նախադասությունների, որոնք պարբերության առմիջուկային անդամներ են։ Շարահյուսության բարձրագույն միավորի՝ տեքստի (լիախինության) որպես միջուկ («բնահենք») առանձնացվում է «այն հինույթը կամ հինույթների ամբողջությունը, որի մեջ բացահայտվում է հենքի (տեքստի) բուն առարկան, նրա թեման» (էջ 76)։ Նշենք, որ տեքստերի՝ հեղինակի կողմից կատարվող դասակարգումներն ավանդական տերմինաբանությամբ լեզվական ոճերի դասակարգումներ են։ Ընդհանրապես տեքստային (հենքային) մակարդակի, նրա միավորների և շարահյուսության հենքագիտություն բաժնի (հինությանբանություն կամ պարբերաբանություն և լիախինությանբանություն ենթաբաժիններով) առանձնացումը նորույթ է և՛ այդ բնագավառի նոր մեկնաբանության, և՛ մեր համոզմամբ՝ հաջողված տերմինաբանության առումներով։

Ահա տեսական այս մոտեցումներով են նկարագրված վերը բերված կադապարների տարբեր կարգի դրսևորումները (մասնակադապարները), որոնք, անտարակույս, խիստ արժեքավոր են թե՛ ընդհանուր տեսական, թե՛ հայերենի շարահյուսության կոնկրետ

հիմնախնդիրների լուծման նոր ուղիներ մատնանշելու դիտվածքներով:

«Շարահյուսական ուսումնասիրություններ» գրքի երկրորդ հատվածը («Հայերենի շարահյուսական միջոցների ծագումը») առավելապես պատմահամեմատական ուղղվածություն ունի, թեև վերլուծությունները հիմնվում են դարձյալ համընդհանուր տեսության կարգերի ու ըմբռնումների վրա: Հնարավորություն չունենալով հանգամանորեն անդրադառնալու այս հատվածի խիստ հետաքրք-

րական նյութին՝ նշենք միայն, որ շարահյուսական գուգաբանությունների, հին հայերենի առդիրների (կապերի ու մախդիրների), շաղկապների ծագման և իմաստային դասակարգության հարցերի քննության մեջ նույնպես դրսևորվել են մեծ գիտնականի կուռ տրամաբանությունն ու գիտական խորաթափանցությունը, հատկանիշներ, որոնք բնութագրական են ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյանի գիտական ժառանգության համար ընդհանրապես:

Լ. Գ. ԹԵԼՅԱՆ